ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

09 մայիսի 2021թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամներից 13 անդամները:

Նիստի օրակարգը ներկայացրեց Մ. Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում:

2. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների ամփոփում:

3. Ավարտական աշխատանքների պաշտպանությունների ժամանակացույցերի հաստատում: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի անդամների ներկայացում:

4. Հաղորդում 2-րդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

5. Հաղորդում Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում: ֆակուլտետում նոր կրթական ծրագրի մշակման ընթացքի մասին:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյան:

Առցանաց քվեարկությամբ՝ 13 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 4/1

- **Հաստատել նիստի օրակարգը:**

Օրակարգի առաջին ՝ « 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ Մ.Զաքարյանի զեկույցը ներկայացվում է ստորև.

2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները ավարտված են: Մի մասը անցկացվել են OnLine, մի մասը OffLine, ըստ դասախոսների հայեցողության: OnLine անցկացման դեպքում նույնպես դասախոսները պահպանել են օբյեկտիվությունը:

Բացակայությունների պատճառով ներկայացվել են համալսարանից հեռացման հետևյալ ուսանողները.

1. Ինֆորմատիկա 1-ին կուրսի ուսանող՝ Սասուն Տոնոյանը, ըստ մասնաճյուղի կանոնադրության 125 ժամ և ավելի բացակայության պատճառով:
2. Ինֆորմատիկա 3-րդ կուրսի ուսանող՝ Գոռ Մելիքսեթյանը, ըստ մասնաճյուղի կանոնադրության 128 ժամ և ավելի բացակայության պատճառով, նաև ունի կրեդիտային պարտքեր ֆունկցիոնալ անալիզ և թվային մեթոդներ առարկաներից:

➢ Վատ կարգավիճակում են Ի 2-րդ կուրսի ուսանողներ Հայկ Սարիբեկյանը և Վոլոդյա Ներկարարյանը:

➢ Ինֆորմատիկա 3-րդ կուրսի ուսանող Հակոբ Գյոգչյանը ունի կրեդիտի պարտք թվային մեթոդներ և ֆունկցիոնալ անալիզ առարկաներից:

Արտահայտվեցին Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ OnLine բոլոր աշխատանքները քննարկվել են, այնուհետև գնահատվել: Դժգոհություններ չկային: OffLine տարբերակով օբյեկտիվությունը ավելի բարձր է:

Ուսանողուհի Հ.Ստեփանյանի կարծիքով նախընտրելի է OffLine տարբերակը, տան միջավայրը քննությանը տրամադրող չէ, արտագրությունները շատ են:

Որոշում՝ 4/2

➢ **Որոշեցին ընդունել ի գիտություն:**

Օրակարգի երկրորդ՝ «Ավարտական աշխատանքների նախապաշտպանու թյունների արդյունքների ամփոփում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ Մ.Զաքարյանի զեկույցը ներկայացվում է ստորև.

Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունները տեղի ունեցան OffLine, բնական գիտությունների ֆակուլտետի համակարգչային սրահներում:

Արտահայտվեցին. Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ Ինֆորմատիկա մասնագիտության 4 ուսանողների աշխատանքները դեռևս թերություններով էին: Մի քանի աշխատանքներ ռեֆերատիվ բնույթի էին: Ռ.Յոլչյանի ղեկավարած աշխատանքները ունեն և ծրագրային և ինժեներական լուծումներ:

Գ.Սիմոնյանը նշեց, որ աշխարհագրություն մասնագիտության 5 աշխատանքներն էլ պատրաստ էին պաշտպանության:

Դիտողությունները նշվեցին:

Ըստ ավարտական աշխատանքների թեմաների որոշեցին գրախոսների կազմը: *Ցուցակը տես հավելված 1–ում*: Բոլոր աշխատանքները կուղարկվեն գրախոսներին /pdf ֆորմատով/ պաշտպանությունից 10 օր առաջ:

Որոշում՝ 4/3

- **Որոշեցին հաստատել գրախոսների կազմը:**

Օրակարգի երրորդ՝ « Ավարտական աշխատանքների պաշտպանությունների ժամանակացույցերի հաստատում: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի անդամների ներկայացում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ Մ.Զաքարյանի ներկայացրեց ավարտական աշխատանքների պաշտպանությունների ժամանակացույցերը և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը:/Տես հավելված 2/

Որոշում՝ 4/4

- **Որոշեցին հաստատել ավարտական աշխատանքների պաշտպանությունների ժամանակացույցերը և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը:**

Օրակարգի չորրորդ՝ «Հաղորդում 2-րդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննություն ների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ Մ.Զաքարյանի զեկույցը ներկայացվում է ստորև.

Բոլոր քննությունները լինելու են և OffLine և OnLine տարբերակներով, դրանք նախորոք հարմարեցվել են համապատասխան դասախոսների և ուսանողների հետ: Ժամանակացույցը պատրաստ է: Ստուգարքային շրջանը հունիսի 1-5, իսկ քննաշրջանը՝ հունիսի 7-26: Ժամանակացույցը նախապես կներկայացվի դասախոսներին և ուսանողներին:

Որոշում՝ 4/5

- **Որոշեցին հարցաշարերը և տոմսերը նախապես ներկայացնել ամբիոն:**

Օրակարգի հինգերորդ՝ «Հաղորդում Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում: ֆակուլտետում նոր կրթական ծրագրի մշակման ընթացքի մասին:» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի Ծ/ԻՏ ամբիոնի վարիչ տեխ.գ.թ.,դոցենտ Ա.Հովակիմյանի զեկույցը ներկայացվում է ստորև.

Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խումբը ռեգուլյար հանդես չի եկել, բայց մտահոգությունների շուրջ անընդհատ քննարկումներ են տեղի ունեցել : Քննարկվել են և նոր առարկաների և ծրագրային բովանդակության վերաբերյալ հարցեր: 21-25 թթ. Կրթական ծրագրում առարկայական փոփոխություն չի լինի, բովանդակային փոփոխություններ կլինեն և կներկայացվեն նախապես, մինչև ուսումնական տարվա սկիզբ:

Ցանկալի է անցնել ֆունկցիոնալ ծրագրավորում՝ բակալավրի հիմնական առարկա է, հիմնականում ծրագրավորման Lisp լեզուն է դասավանդվում: Կամընտրական առարկաների շարքում լինի նաև մեքենայական ուսուցման ճյուղը :

ՀԱՎԵԼՎԱԾ 1

<<Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա >> մասնագիտության IV կուրսի ավարտական աշխատանքների թեմաներն ըստ ղեկավարների և գրախոսների /2020-2021/ ուստարի

Ղեկավար	*Ուսանող*	*Թեմա*	*Գրախոս*
Զաքարյան Մ. (1) ֆ.մ.գ.թ., դոցենտ	Ստեփանյան Դավիթ	Հարմոնիկ ֆունկցիաներ և դրանց կիրառությունները:	Նավոյան Վ.
Հովսեփյան Կ. (2) ֆ.մ.գ.թ., դոցենտ	Աթաբեկյան Արփի	Օպերատորային հանրահաշիվներ	Զաքարյան Մ.
	Ալավերդյան Տարոն	Երկգծային և քառակուսային ձևեր	Զաքարյան Մ.
Քամալյան Հ. (1) ֆ.մ.գ.թ., դոցենտ	Խառատյան Դավիթ	Մատրիցների և նրանց որոշ կիրառություններ	Հովսեփյան Կ.
Նավոյան Վ.(1) ֆ.մ.գ.թ.,դոցենտ	Սարդարյան Էրիկ		------
Աթոյան Մ.(1) ֆ.մ.գ.թ., դոցենտ	Օրդինյան Լիլիթ	Միաչափ շարժման խնդիրների լուծումը ֆիզիկայում:	Մարգարյան Ա.
Մարգարյան Ա. (1) ֆ.մ.գ.թ., ասիստենտ	Գևորգյան Միեր	Հեռահաղորդակցության թվային տեխնոլոգիաների հիմունքները	Յոլչյան Ռ.

<<Քարտեզագրություն և կադաստրային գործ>> մասնագիտության IV կուրսի ավարտական աշխատանքների թեմաներն ըստ ղեկավարների և գրախոսների /2020-2021/ ուստարի

Ղեկավար	*Ուսանող*	*Թեմա*	*Գրախոս*
Դավթյան Սմբատ (3) տեխ.գ.թ.,	Քոչարյան Դիանա	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայի 2010-2020 թթ. վերլուծությունը	Հակոբյան Արթուր

ասիստենտ	Էդիլյան Մարսելա	Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական կադաստրի վարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում	Սիմոնյան Գևորգ
	Էդիլյան Էդիտա	Հողօգտագործման հատուկ ռեժիմ ունեցող գոտիներն ու տարածքները Հայաստանի Հանրապետությունում և դրանց արտացոլումը կադաստրային փաստաթղթերում	Հակոբյան Արթուր
Հակոբյան Արթուր (2) դասախոս	Գասպարյան Տիգրան	Բնակավայրի հատակագծային և կառուցապատման նորմատիվային համակարգը ՀՀ-ում:	Դավթյան Սմբատ
	Ստեփանյան Սաշա	Անշարժ գույքի գնահատման համակարգը համայնքի վարչական սահմաններում:	Դավթյան Սմբատ

<<Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա >> մասնագիտության հեռակա ուսուցման V կուրսի ավարտական աշխատանքների թեմաներն ըստ դասախոսների և գրախոսների /2020-2021/ ուստարի

Ղեկավար	*Գրախոս*	*Ուսանող*	*Թեմա*
ՄակարյանԱ. (2) ֆ.մ.գ.թ.,դոցենտ	Օթարյան Ք.	Գևորգյան Գևորգ	Լարի տատանման խնդրի համակարգչային մոդելի կառուցում
	Ճաղարյան Մ.	Աղաջանյան Հրաձին	Ջերմաստիճանային 2D դաշտի մոդելավորում
Հովակիմյան Ա. (4) տեխ.գ.թ., դոցենտ	Ծատուրյան Լ.	Ղազարյան Աննա	Ինտերնետ-խանութի նախագծում մանրածախ առևտրի համար
	Ծատուրյան Լ.	Խաչատրյան Արթուր	Տեղեկատվական կայքի մշակում
	Ծատուրյան Լ.	Չոբանյան Արթուր	Բջջային հավելվածի մշակում eBeacon-տեխնոլոգիայի հիման վրա
	Օթարյան Ք.	Փիրումյան Արեգ	Տվյալների կլաստերիզացիա k-միջինների մեթոդով
Յոլչյան Ռ. (4) տեխ.գ.թ., դոցենտ	Ճաղարյան Մ.	Սարհատյան Իշխան	Ռադիոկառավարման սխեմայի մշակում
	Մարգարյան Ա.	Սանթրոսյան Գրետա	Բազմականալ ռադիոկառավարման սարքի մշակում
	Հովակիմյան Ա.	Այդինյան Ռուբինա	Ունիվերսալ էլեկտրոնային չափող

			սարքի մշակում
	Հովակիմյան Ա.	Եղիկյան Միքայել	Շարժիչի պաշտպանության համալիր սխեմայի մշակում
Պողոսյան Կ.(3) տնտ.ասիստենտ	Օթարյան Ք.	Շահնազարյան Արամ	Ռեգրեսիայի խնդիրներում մեքենայական ուսուցման որոշումների ծառերի ալգորիթմը (decision tree)
	Օթարյան Ք.	Ոսկանյան Գերասիմ	Նեյրոնային ցանցերի հիման վրա մարդու ճանաչումը նկարի հիման վրա
		Սահակյան Դերենիկ	Ժամանակային շարքերի մոդելավորումը նեյրոնային ցանցերով
Ճաղարյան Մ. (3) ասիստենտ	Յոլչյան Ռ.	Եգանյան Գրիգոր	Ուսուցողական ռեսուրսի իրականացում <<Բուլյան ֆունկցիաներ» թեմայի համար
	Յոլչյան Ռ.	Ավետիսյան Արմինե	Նախապատվությունների հերթեր
		Ղուլարյան Սուսաննա	Բուրգեր, նրանց իրականացումը և բինար որոնման խնդիրը
Օթարյան Ք. (2) դասախոս	Սիմոնյան Գ.	Մելքումյան Վարսուհի	Բազմապարամետր ստոխաստիկ “Զարդանախշ” մոդելի ծրագրավորում:
	Հովակիմյան Ա.	Թավարյան Գևորգ	“Բարդ հավանականային հաշվիչ” ինժեներական հաշվարկների համար
Ծատուրյան Լ. (2) դասախոս	Ճաղարյան Մ.	Թովմասյան Հասմիկ	Կազմակերպության աշխատակիցների տվյալների (կադրերի բաժնի) ղեկավարման հարթակ
	Հովակիմյան Ա.	Դանիելյան Սուրեն	Խոհարարական բաղադրատոմսերի դինամիկ վեբ կայք

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«***Աշխարհագրություն***» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ ՀՀ կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության բաժնի պետ,
տեխն. գ. թ. Մկրտիչ Շուրայի Մկրտչյան:

Անդամներ.

1. Սիմոնյան Գևորգ Սարգիսի-ԸՄԲ ամբիոնի վարիչի պաշտոնակատար,ք.գ.թ.,դոցենտ,
2. Դավթյան Սմբատ Ռուբիկի-ԸՄԲ ամբիոնի ասիստենտ,տեխն.գ.թ.,
3. Հակոբյան Արթուր Պայքարի-ԸՄԲ ամբիոնի դասախոս,
4. Նազարյան Արծրուն Հրանտի-ՀՀ Տավուշի մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ,
5. Այդինյան Արթուր Համլետի-Իջևանի քաղաքապետարանի քաղաքշինության բաժնի պետ:

«*Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)*» և «*Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա*» մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ «Զայլինքս Արմենիա» ՍՊԸ-ում ծրագրավորման ավագ ինժեներ, ֆ.մ.գ.թ. Գարեգին Վրեժի Սարգսյան

Անդամներ.

1. Զաքարյան Մանվել Աշոտի–Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, ֆ.մ.գ.թ.,դոցենտ
2. Հովակիմյան Աննա Սեդրակի–Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, տեխ.գ.թ.,դոցենտ
3. Յոլչյան Ռոբերտ Մառլենի– Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, տեխ.գ.թ.,դոցենտ
4. Թովմասյան Արտաշես Բարսեղի– Digital wave ընկերության տնօրեն
5. Սարոյան Կիմ Ֆուրմանովի– Տվյալների բազաների ճարտարապետ,բազաների ադմինիստրացիայի թիմի ղեկավար: